ՅՈՒՆԻԲԱՆԿ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի անվանումը՝ **«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն**:

| **«Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի պայմանները** | |
|---|---|
| Արժեթղթերի դասը | Անվանական չփոխարկվող արժեկտրոնային |
| Արժեթղթերի ձևը | Ոչ փաստաթղթային |
| Արժեթղթերի քանակը՝ | 200,000 հատ ԱՄՆ դոլարով, 300,000 հատ ՀՀ դրամով |
| Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 100 ԱՄՆ դոլար, 10 000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝ | 20,000,000 ԱՄՆ դոլար, 3 միլիարդ ՀՀ դրամ |
| Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝ | Ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից |
| Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Խորհրդի կողմից:<br><br>Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվելու և հրապարակվելու են յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առնվազն երկու օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում: | |
| Կորպորատիվ պարտատոմսերը կարելի է ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո), մասնավորապես Հայաստանի Ֆոնդային Բորսայի առևտրային հարթակում: | |
| Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ում և «Յունիբանկ» ԲԲԸ –ում: «Յունիբանկը» հանդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար, բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում: | |
| «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների | |

հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել է 10.10.2019թ.-ին N 1/741Ա որոշման համաձայն:

Ներդրողը կարող է ձեռքբերել Ծրագրային Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում (ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am: